չուտով մեզ ծանո՛ւր։ Զայս թուղթս գտեալ Մարտիրոս վարդապետին եւ արար ժողով ի յԱստուածածնին (ՂԷՂՒ)։ Կէս աւուրս եղիազար վարդապետն եւ կաւ ի Սուրբ Նիկողոս և մեք գնացաք ի քով նորա, և ի ժամ մտեալ, և յետ ժամուն եկաք ի տուն Մղտեսուն։

Ինշ (5 Մայիս) առաւօտուս գնացի ի ժամն և մեռեր էր Թագվորի տղայ Սարգիսն Ը օր հիւանդացեալ, և գնացաք ի տուն նորա և բերաք ի ժամն, և անտի գնացի ի Մղտեսունցն և անտի ի խանութ։ Այսօր թաղաւորն չուրջ կու գայր թէպտիլ։ Երեկոյիս գնացի ի տուն Մղտեսուն և անդ պատկեցաք, և Տէրտէրն ոչ եկն, այլ ի տուն գնաց։

Գշի (6 Մայիս) առաւօտուս ոչ գնացի ի ժամ և ի Մղտունցն էաք։ Տէրտէրն եկաւ եւ գնաց կերաք եւ գնացի ի խանութ. և երեկոյիս գնացի ի Սուրբ Նիկողոս և անտի ի Մղտունցն և գնացի զմեր Գրիգորն ձայնել և պարսպի տակն կանգնեալ էի՝ և Վարդապետն եկեալ անցաւ, գայր ի Օրթաքօյէն, և ես տեսեալ՝ գկնի նորա գնացի ի Սուրբ Նիկողոս, և անտի ի տուն Գրիգորենց եւ անտի ի տուն Մղտեսունց եւ ոչ եկաւ Գրիգորն։ Երեկոյիս Մարտիրոս վարդապետն թուղթ ուղարկեաց յամենայն տեղիս թէ Առաւօտուն գան ի յԱստուածածնին։

Եւ օրս օլօֆէ ելաւ ի թագաւորէն ամենեցուն, եւ Հնդկաց հրեշտակն մտաւ առ թագաւորն եւ ընծայեաց զթագաւորն։

Գշի (7 Մայիս) առաւօտուս սակաւ մի հաց կերաք և մեր Շէրպէթճի Գրիգորն անդ էր, և ելաք գնացաք ի յԱստուածածնին ի ժողովն, և տեսաք որ անդ էին ամենեքեան նստեալ ի մէջ եկեղեցոյն գաս գաս Զ եկեղեցոյ իշխանք և աթոռակալք երիցունք, ևս յԱլեւսվիւտարու և Պէշիքտաշու, Օրթաքօյուն և Թօփղա-